

ՄԱՐԴ ՀԵՏԱԶՕՏՈՂՆ Է ԳԻՏՈՒԹԵԱ՞Ն ԹԷ ՆԱԵՒ ՀՈԳԵԿԱՆԻՆ

- 1. Զգողական Զօրութիւնը**
- 2. Աստուած Գետնի Հողը Առաւ և Զայն
Իր Կերպարին Ու Նմանութեան
Դարձուց, Իսկ Մարդ Առաւ Յիսուսի
Եկեղեցին ու Զայն Անխօս Զարէ
Տաճարի Վերածեց**
- 3. Վսեմ Անճնազոհութիւն**
- 4. Եկեղեցին Պատարագեա՛լ Հաւաքա-
կանութիւն Կը Նշանակէ**
- 5. Մոլեռանդութի՞ւնն Թէ՛ Նուիրում**

IS MAN AN EXPLORER OF SCIENCE, OR THE SPIRITUAL?

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2007**

ՁԳՈՂԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Արարատի նախապատմական Հայ բանահիւս դարբինները երկնեցին ոսկեղնիկ լեզուն ոչ թէ պողպատեայ սալի մը վրայ, այլ իսկութիւն ցոլացնող անխորաչափելի *խորմուրդի* վրան: Այս պատճառաւ «ձգողականութիւն» բառը «ձգել, թողուլ» չի՛ նշանակեր, այլ՝ դէպի իրեն ֆաշող (ուժ)ի յատկանիշն է, կամ մարմիններու իրար ֆաշելու և մէկը դէպի միւսը ձգտելու՝ տիեզերական յատկութիւնը կամ օրէնքը կը բնորոշէ:

Վերոյիշեալ ձգողական հմայիչ ուժը յայտնաբերուած է տարասփիւռֆի բոլոր գաղութներու մէջ ուր կը հնչէ մեր ոսկեղնիկ պանծալի բարբառը: Հայաշունչ և հայաբոյր սոյն անմահ ոսկեղնիկ հիւսկէններն են որ կը պահեն սփիւռֆացրիւ Հայ բեկորները ձգողական ջրջագիծի սահմաններէն ներս:

Ձգողական զօրութիւնը որ միայն երեք դարու պատմութիւն մը ունի սկսեալ Այզիֆ՝ Նեւտոնէն, սակայն ուժգին կերպով գործածական է աստղագիտական և բնագիտական մարգերու ու գրեթէ բոլոր գիտութիւններու մէջ: Ձգողական ուժի երեք հարիւր տարուայ պատմութիւնը՝ անոր գոյութեան ծագումը չէ որ կը պատմէ, այլ՝ գիտնականներու ըմբռնումի՛ն հիմնական սկիզբը կը պարզէ: Ձգողութիւնը կրնայ սկիզբ մը ունեցած ըլլալ կամ չըլլալ:

Տիեզերական ձգողական ուժը երբ իրեն կ'ենթարկէ անչափելի և վիթխարի մեծութեամբ երկնային մարմինները կամ բջիջային փոքրիկ գործարանային հիւսկէնները և մասնիկները, ի՞նչու մեր խրոխտ հայեցողութեան մէջ չտեսնել նաեւ **հոգեկա՛ն** հորիզոնի ձգողական զօրութիւնը: Գիտութեան ֆուքմերը՝ որոնք տիեզերֆի գաղտնիքներու սեմին՝ մրջիւններ անգամ չեն, ու հոգեկան հորիզոնին՝ մասնիկներէն ալ փոքր, ի՞նչու կը թերահաւատին *կրօնական և հաւատֆի* զօրութեան ու անո՛ր ձգողականութեան դէմ:

Աստղադիտարաններու սպասաւորող հմուտ ֆահանաներէն ֆանի՞ հետազօտիչ գիտնականներ «ձգողականութիւնը» տարած են տարրալուծարան, տարրաբանելու և ճանչնալու ձգողականութիւն կոչուած բնութեան իսկութիւնը և առանձնաչատկութիւնը: Միթէ գիտնականները կրնա՞ն բացատրել թէ ի՞նչ է ձգողական զօրութիւն կոչուած ուժը, ուրկէ՞ կու գայ անոր ազդեցութիւնը և ի՞նչպէս կը գործէ ան: Արդի գիտնականները իրենք իրենց յատկացուցած են *հաւատֆի* և կրօնի ֆահանաներու իրաւասութիւնները և կը ջանան խօսիլ *կարծիքներու և վարկածներու* մասին, իբր թէ անոնք դարձած ըլլային անյեղելի ճշմարտութիւններ և իսկութիւններ:

Վերոյիշեալ տողերը նուաստութեան և անարգանքի գրութիւններ չեն գիտութեան մենատէրներուն դէմ, այլ անոնց պերճախօսութիւնը սահմանադրելու և ցոյց տալու համար իրենց, որ կրօնական հարցերը չ'ոտնակոխեն: Որովհետեւ կրօնը իր մէջ կը պարփակէ համայն տիեզերքի գիտական առնչութիւնը, մինչդէռ գիտնականներու ուսումնասիրութիւնը անոր ջօջափելի՛ երեսակն է միայն:

Աստղագիտական և մոլորակային մարմիններու առնչութեամբ թէեւ կը գործածեն ձգողական ուժի ակնարկութիւնները, սակայն այս չի՛ նշանակեր թէ տիեզերքի մէջ *Հոգեկա՛ն* ձգողութեան Ուժը իր գործունէութիւնը անտես կ'ընէ:

Ի՞նչու մարդկութիւնը, սկսեալ նախապատմական դարերէ, կը ձգտի դէպի գեղեցիկը, բարին և աննիւթականը, կրօնական պաշտամունքի և աղօթքի միջոցաւ: Կարելի՞ է միթէ մարդ էակին համար ստեղծել չգոյութիւն մը: Եթէ չկայ Աստուած, չկայ հոգեկան գոյացութիւն և չկայ հոգեկան գիտակցութիւն, մարդ-արարած ի՞նչպէս կրցած է երեւակայել և հիմնել կրօնականի և գերբնականի վիթխարի տաճարներն ու մեհեանները որոնցմէ ոմանք գոյ են ցարդ Եգիպտոսի մէջ, և ոմանց փլատակները կը զարդարեն երկրագունտի բազմաթիւ անկիւնները:

Ի՞նչու, “հոգեբանութիւն” կոչուած գիտութեան՝ (որ կ'ուսումնասիրէ մարդուն ներաշխարհը, անոր ներքին անցուդարձերը, զգացումներն ու հոգեկան տրամադրութիւնները,) տալ չափազանցուած կարեւորութիւն և լուրջ աջիաստանք ու լքել և ուրանալ Տուիչը (զԱստուած) այդ հոգեկան դրոյիչ սկզբնապատճառին:

Մարդ-արարած՝ իր հոգեկանի տենչն ու հետազօտութեան մղումը, միթէ հողէ՞ն ու կաւէ՞ն ստացաւ, թէ աստուածային միջամտութեան մը ճառագայթումով տիրացաւ: Կենդանական աշխարհի մէջ, ի՞նչու միայն մարդ էակն է որ կ'զբաղի կրօնով և անդենականի հարցով: Որպէս առարկայական ապացոյցներ, ան կառուցած է նախապատմական գերեզմաններ, դամբարաններ ու ննջեցեալի դամբանականներ և մեռեալներու գիրքեր: Ո՞ր անասունն ու չորհոտանին ունի կամ ձգած է դամբարանի կամ անդենականի հետք, նշոյլ կամ ազդեցութիւն մը:

Մարդ-արարածին *ձգտումն ու խոյանքը* դէպի իր Արարիչը, դարձուցած է զինք հնարիչն ու կերտիչը քաղաքակրթութեան և մշակոյթի: Մարդ էակ առանց իր *հոգեկա՛ն* ձգողական գօրութեան, բնաւ պիտի չի գանազանուէր իր անասուն եղբայր (եղբայր) զազաններէն: Մարդ որքան ենթարկէ ինքզինք այդ Ձգողական Չօրութեան, այնքան աւելի կը դառնայ աստուածաման: Մարդ՝ իր հոգեկան ձգողական ներդաշնակութեան ծիրին մէջ՝ պիտի գտնէ իր հոգեկան որակի գօրութիւնը և քիւրեղանալով (հոգեկան սրբութեամբ) պիտի դառնայ անանձնական: Ո՞ւր կը կարծուի ըլլալ գաղտնիքը իմացական հերիւնակութեան, եթէ ոչ աստուածային Խորհուրդին

Մտփի՛ն մէջ:

Ճշմարիտ և հրաշագործ գիտութիւնը խորհրդանշո՛ւմն է հոգեղէնին և անոր “Ջգողական Զօրութեան”: Կարելի չէ հետազօտել ներմարմնային իրականութիւնները առանց հոգեկան ձգտումի առ Աստուած: Հոգեգագ-
ցողութիւնը՝ հաղորդութիւնն է Աստուծոյ հետ, որ մեզ Իրեն կը փաշէ: Ինչպէս Աբ. Օգոստինոս սաղերգած է ըսելով,

«Մեր հոգիները չեն կրնար հանգչիլ (դադրիլ իրենց հետազօտութեան աշխատանքէն) մինչեւ որ անոնք չի հանգչին Աստուծոյ մէջ»:

Դառնալու համար ակնատես աստուածային սուրբ և հոգեղէն ձգողական գօրութիւններու, դիմելու ենք Սրբազան Մատենագրութիւններու օգնութեան: Հոն՝ առարկայականօրէն պիտի տեսնենք ոգեղէն Զօրութեան ձգողական իրագործելի հզօրութիւնը: Դիտեն՛ք Արեւելի Մոզերու աղերսագին հարցումը,

«Ո՛ւր է հրեաներու թագաւորը որ ծնաւ, որովհետեւ անոր սասողը տեսանք արեւելի մէջ և եկանք երկրապագելու անոր»:

Ջգտում մը դէպի այն Զօրութեան որ Իրեն կը փաշէ բոլոր աննենգ և մաքուր սրտերը: Կրօնփի և հաւատփի այն սպասաւորները, հոգ չէ թէ հեթանոս, անցած են արեւակէզ անապատները, կտրած են օձաթափառ և կարիճախայթ ճանապարհները, հպումն ունենալու համար իրենց երկնատես Աստղին և հոգեձուլուիլ Արարիչ Աստուծոյն հետ:

Երկրորդ երկնագեղ տեսարան մը Յիսուսաբոյր մագնիսական սրտայոյզ իրադարձութիւններու: Միրոյ մագնիսական գօրութիւնը դադար չի՛ տար Բարի Հովի Յիսուսին, մինչեւ գտնելը կորսուած գառնուկին ու վերադարձնելը գայն Իր փարախը:

Հելլէն Իմաստասիրական որոնումներու ձգողական աղաղակն է որ աղերսանման կը դօղանջէ յունախօս բերաններէ որոնք կ’աղօթեն ու կը խնդրեն յարաբերութիւն և միացում ունենալ մեծ և աստուածառաք Խորհուրդ Յիսուսի հետ ըսելով

«Տէ՛ր, կ’ուզենք Յիսուսը տեսնել»--Աւետարան:

Ապրիլ 26, 1990, Քորոնթօ

**ԱՍՏՈՒԱԾ ԳԵՏՆԻ ՀՈՂԸ ԱՌԱՒ ԵՒ ԶԱՅՆ
ԻՐ ԿԵՐՊԱՐԻՆ ՈՒ ՆՄԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՐՁՈՒՑ
ԻՍԿ ՄԱՐԴ ԱՌԱՒ ՅԻՍՈՒՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ
ԶԱՅՆ ԱՆԻՍՍ ՔԱՐԷ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԾԵՑ**

Արարիչ Աստուած ձեռք առաւ անհոգի հողն ու անմիտ և անզգայ քարը և զանոնք կերտեց Իր Կերպարին և Նմանութեան «Եւ անոր ոռնզերուն կենդանութեան շունչ փչեց, ու *մարդը կենդանի հոգի եղաւ* --»(ու եղել մարդն հոգի կենդանի):

Մարդ արարածին և Աստուծոյ միջեւ զարգացող փոխյարաբերութիւնը մարդը չափահասութեան կը տանի: Արարչի և արարածի միջեւ անփակտելի կապը, փոխյարաբերութիւնը, փոխադարձ արժեւորումը՝ Աստուած Իր Արարիչ ըլլալու հանգամանքով կ'իրարկէ, իսկ մարդն աստուածանման արարած մը հանդիսանալու համար իր անկապտելի շնորհով, նուիրումով և ծառայութեամբ կը հասնի: Մարդ արարածի աստուածանմանութիւնը իրական կը դառնայ, որովհետեւ այդ տրուած ընծան՝ աստուածային գերագոյն շնորհ մըն է: Բանաւոր արարածը փնտրած է իր Արարիչը և Անկէ հեռու խաղաղութիւն ու հանգիստ չէ գտած: Աստուած Ինքզինք մարդուն կը բացայայտէ որպէս՝ **«Ես եմ Որ եմ»**, այսինքն՝ ի տարբերութիւն կուրբերու և ձեռական աստուածներու: Հոգեկան յափշտակութեան մէջ մարդ կ'ըմբռնէ թէ ինք ո՛չ միայն արարած մըն է, այլ Աստուծոյ գործակիցը: Մարդ արարածը, ստեղծագործութեան ամենէն կատարեալ նմոյժը ըլլալուն պատճառաւ, տակաւին չէ արժանացած այն ուշադրութեան, որուն արժանի է ինք:

Պուտտայականութեան մէջ չկայ Աստուած, չկայ գերբնական Ուժ, չկայ Արարիչ, չկայ արտաբն Փրկչի գաղափարը: Այն մարդը, որ տիեզերական հրաշալոյս գեղեցկութիւններուն մէջ չի տեսներ Արարիչը, անոր մէջ կը պակսի ոչ թէ հաւատքը, այլ դատողութիւնը: Զրիստոսի Մարդեղութիւնը այն *լուսածածանչ կամուրջն է*, որ կը միացնէ Արարիչը՝ արարածին:

***Աւետարանը, այսօր, կենդանի՝ Աստուծոյ
գրաւոր ներկայութիւնն է:***

Երբ տիեզերքի հրաշալիքներուն կը նայիս ու կը սփանջանաս և Արարիչը չես տեսներ և չես սիրեր, արդար է, որ յաւիտենական բնակավայրդ ըլլայ... գերեզմանը: Ինչ է տարբերութիւնը գիտութեան և կրօնքին: Մէկը սնունդ է մտքին, իսկ միւսը՝ հոգիին: Երկուքն ալ կը ձգտին ճշմարտութեան: Մէկը կը

փորձ է մերձեցնալ արարչագործութեան անսպառ գաղտնիներուն, միւսը՝ Արարիչին և անով կ'ըմբռնէ կեանքի ճշմարիտ եութիւնը: Երջանկութիւնը մարդ արարածին իր Արարչին հետ ունեցած ուղիղ, մտերիմ և յարատե յարաբերութեան մէջ կը կայանայ: Առանց Աստուծոյ, մարդկային կեանքը՝ սոսկ ունայնութիւն է: Աստուած կ'երեւի Իր արարչագործութեամբ, սակայն բնութիւնը չէ՝ Աստուած, այլ Անոր արտայայտչական երեւոյթը: *«Միայն բարի ու արդար գործի և ստեղծագործ, ջինարար աշխատանքի ճամբուն վրայ է որ մարդ ... կը զգայ արարչական ուժերու զարթումը իր մէջ* --» **Վազգէն Ա. Կաթողիկոս:**

Աստուծոյ հրաշագեղ արարչութեան մէջ Իր փառքը կը տեսնենք Իր սիրոյ ու գուրգուրանքին մէջ: Աստուած, հրապուրելով մեզ կ'ազնուացնէ եթերէն վեր դէպի Իրեն, և նիւթեղէնէն հոգեղէնի կը փոխադրէ մեր հոգին:

Մարդ կենդանիներէն կը տարբերի իր գիտակցական վարքով, բանական հոգիով, բարոյական սկզբունքով և ինքնիշխանութեամբ: Մարդուն բնորոշ է իր ինքնագիտակցութիւնն ու ստեղծագործական աշխատանքը: Բոլոր կենդանիներուն մէջ մտաւորապէս ամենազարգացածն է մարդը և միայն ան ունի յօդաւոր լեզու: Մարդը բոլոր արարածներու թագն ու պսակն է, որովհետեւ Աստուած իմանալի հոգի շնորհած է մարդուն: Մարդ, իբրեւ ֆիզիքական և իմացական ու բարոյական կազմաւորութիւն, հրաշալիք մըն է: Ըստ, Ս. Ներսէս Շնորհալիի, մարդկային հոգին և մարմինը իրենց բնոյթով ու եութեամբ միանգամայն տարբեր են, մէկը տեսանելի, իսկ միւսը՝ անտեսանելի ասոնց *միասորումէն յետոյ*, մարդը մէկ բնութիւն ունի:

Մարդ օժտուած է իմացական և զգայական զարգացման անսահման հնարաւորութիւններով, որովհետեւ *աստուածակերպար ջինութիւն* է ան: Այսօր Աստուած կը կանչէ մեզ մաս կազմելու Իր համաշխարհային ընտանիքին մէջ՝ ճանչնալու *մարդը* որպէս մեր *ընկեր*՝ արարածը: «Մարդ առաջին հերթին պարտական է իր բարեկամին, այնուհետեւ իր անձին, և վերջապէս Աստուծոյ»-- **Որոգինէս:** Մարդ պէտք է ապրի ո՛չ միայն ինքզինքին համար, այլ և ազգին և համայն մարդկութեան համար: Եսականութիւնը և ինքնաբաւականութիւնը չարիք են: Եկեղեցին ժամադրավայրն է, ուր Աստուած և մարդ կը խօսին իրարու հետ: Մարդ արարած բնազդաբար աղօթո՞ղ էակ մը եղած է: Աստուած Իր հոգւոյն անհունութեամբ կը սիրէ մարդ արարածը: Մարդ առանց Գերբնականին կը պարպուի, կ'անջքանայ և կ'իմաստազրկուի: Աստուծոյ սիրոյն ծնունդ են աշխարհ և մարդ:

Չենք կրնար հաւատալ թէ, մեր երկրի վրայ գոյութիւնը պատահական դիպուածի մը արդիւնքն է կամ ճակատագրի մը պատահարը: Մարդ արարածին գործօն մասնակցութիւնը իր գիտակցութեան պատճառաւ չափազանց մտերիմ ու սերտ է անհուն տիեզերքին հետ: Մարդկային սոյն իմացական կարողութիւնը համայն գոյացութեան մէջ մեզ կը ստիպէ որ մարդ էակը նպատակի համար ստեղծուած արարած մըն է, ու ոչ պատահականութեան մէկ կոյր ու

ժամանակաւոր արտադրութիւնը: Մարդու անհատական մեկուսացումը կը դառնայ իր բանտը: Մարդ անխուսափելիօրէն յարաբերութիւն ունի

1. **աշխարհի հետ,**
2. **բնութեան հետ,**
3. **մարդու հետ,**
4. **Աստուծոյ հետ:**

Մարդ և Աստուած իրարու հետ միացած, միակամ, միասիրտ, միաբան, միատարր ըլլալու համար ստեղծուած են: Առանց գերբնական ներշնչումի, մարդ հաւասար է կենդանիներու: Նոյնպէս և մարդ պէտք ունի Վերանորոգութեան: Աստուծոյ անճառելի մարդասիրութեան ու ողորմութեան ամենէն պերճախօս և համոզիչ արտայայտութիւնը Մարդեղացեալ Յիսուս է՝ մարդասիրութեան գագաթնակէտը: Աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնը ուղղել է մարդը մարդասիրութեան և գթութեան: Մարդ արարած որքան մօտենայ Աստուծոյ, այնքան աւելի մօտեցած կ'ըլլայ իր մարդ ընկերոջ:

ԱստուածՈրդին մարդացաւ, որպէսզի մարդ մարդկայնանայ՝ առաւել մարդանայ՝ աստուածանայ: Աստուած այնքան սիրեց մարդկութիւնը, որ դրկեց Իր Որդին, որպէսզի մարդանայ, մարդկային ջաղուածփին և ընթացփին մէջ մտնէ ու մեզ աստուածացնէ: Հին Կտակարանին մէջ Աստուած եղած էր շունչ, եղած էր ձայն, եղած էր երեւում. Զրիստոսով Ան եղաւ Մարմին: Զրիստոնէութիւնը Յիսուսի՝ Մարդեղութեան, և մարդու առաւել մարդացման հաւատքն է: Մարդեղեալը՝ Իր կենսասէր ներկայութեամբ, գարուն բերաւ եղբայրութիւն բերաւ, մարդկային անապատ երաշտութեան: Յիսուս բացաւ զոհողութեան գերագոյն ճամբան, արիւնի ու Գողգոթայի: Մարդեղեալ Բան Աստուծոյին հանդիպող անձը կը ստանայ նոր բնութիւն և նոր անուն: Միմուն՝ Յովնանի որդին կ'ըլլայ «Պետրոս»՝ "Նոր ծնունդ" մը: Զրիստոնէական կեանքին ելութիւնը մշակումն է Աստուծոյ հետ նոր հաղորդակցութիւն, որ մեզի փարոզուեցաւ Զրիստոսի Մարդեղութեամբ:

Աէ՛րն է ակունքը Զրիստոսի Մարդեղութեան:

Մարդեղացեալ Յիսուս Իր բոլոր հետեւորդներուն տուաւ նոր պատուիրանը, որ կ'ըսէ. ***«Եթէ դուք զիրար սիրէ՛ք՝ առով ամէնքդ պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք»:*** Զրիստոսի Մարդեղութեան Խորհուրդը՝ Իր հիմնելիք եկեղեցին էր աշխարհի վրայ, Իր բացակայութեան ջրջանին: Ուստի:

Ի՞նչ է եկեղեցին, թէ ովք՞եր կը կարծուին ըլլալ Յիսուսի եկեղեցին: Աստուած Որդւոյն Մարդեղութիւնը պէ՛տք է ճառագայթէ հաւատացեալներու կեանքին մէջ: Յիսուս պա՛րտ է իրագործուիլ Ձինք սիրողներու գործերով, անձնուրացութեամբ և ծառայասիրութեամբ:

Եկեղեցին՝ Յիսուսը սիրողներու իմբակը, հոգեկա՛ն արտայայտութիւնը

դառնալու են Անոր խոնարհ Մարդեղութեան՝ Անոր սիրո՛յն, զօրութեան և բժշկութեան: Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը հաղորդականութեան ամենէն նուիրական արտայայտութիւնն է: Աստուած ներթափանցելով և ներխուժելով մարդկային կեանքին մէջ, կը կերպարանափոխէ և կ'ենթարկէ Ձինք սիրող մարդը, դէպի բարին ու ճշմարիտը՝ Յիսուսի Եկեղեցւոյն:

Աստուած Իր Միածին Որդւոյն ինքնութեանը մարդկային կերպար տուաւ, Ան դարձաւ տեսանելի, շօշափելի արտայայտութիւն՝ Մարդեղութիւն: Մարդիկ իրենց մարմնեղէն աչքերով պիտի չկարենային տեսնել անմարմին «Հոգի Աստուած»ը եթէ ԱստուածՈրդին չմարդանար: Մարդիկ իրենց մահկանցու գիտութեամբ պիտի չկարենային լիովին թափանցել և ըմբռնել աստուածային զուտ հոգեւոր յայտնութիւնը:

“Եկեղեցի” բառը կը նշանակէ հաւատացեալներու հաւաք:

1. Յիսուս ըսաւ Պետրոսի. «Այս վեմին վրայ պիտի շինեմ, Իմ Եկեղեցիս»:
2. Եկեղեցին շինողը Յիսուս Ինքը պիտի ըլլայ և ոչ ուրիշ ոեւէ մէկը: Ան կ'ըսէ. *“Իմ Եկեղեցիս”* --**Մատթ. 16-13-20**:
3. «Աստուած Հոգի է» ու գԱյն պաշտողները հոգիով և ճշմարտութեամբ պիտի պաշտեն ըսաւ Յիսուս.

«Պիտի գայ ժամանակ, և արդէն եկած է, երբ ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով և ճշմարտութեամբ, քանի որ Հայրն ալ այդպիսի երկրպագողներ կ'ուզէ իրեն: Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»:

«Եկեղեցին քարեղէն կառոյց մը ըլլալէ առաջ, Կաթողիկոսական նստավայր մը ըլլալէ շահ առաջ, ոգեկան ամբողջութիւն մըն է մեր ժողովուրդի դարաւոր ու չարչարակոծ պատմութեան խորհուրդն է որ կանգուն մնացած է ժամանակի աւերին ու փոթորիկներուն դէմ ու յաւերժութեան ճամբան ցոյց տուած է Հայոց Վեհապանծ Ազգութեան»

--Գրիգոր Նգրուբեան:

«Տիեզերքը տաճար է, և երկինքն է սուրբ սեղան. երկինքն անոր գմբէթն է և իր աստղերն անհամար, Անշտ զարդերը մթութեան»--Լաւարթինի

համար տիեզերքը եկեղեցի է: Պետրոս առաքեալ կը յորդորէ հաւատացեալները որպէսզի սխալ մտածելով Յիսուսի Եկեղեցին քարաշէն կառոյցի չի վերածեն, ու կ'ըսէ. *«Ինչ ալ՝ ապրո՞ղ քարերու պէս կը շինուի՞ք իբրեւ հոգեւոր տաճար մը սուրբ քահանայութիւն մը, որպէսզի մատուցանե՞ք հոգեւոր զոհեր Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս Քրիստոսի միջոցով»--Ա. Պետ. Բ.5:*

1. *Ապրող քարեր*--կը նշանակէ--ծառայո՞ղ և խոնարհ քարեր: Իրար սիրո՞ղ և միասիրտ հաւաքականութիւն, ինչպէս գրուած է. *«Եւ հաւատացեալ ներուսն քաղմութիւնը մէկ սիրտ ու մէկ հոգի էր»--Գործք Դ.32:*

«Սուրբ Եկեղեցին ... պատկերն է Աստուծոյ անով՝ որ ան, Աստուծոյ

նմանութեամբ, կ'իրագործէ *հաստացեալ ներու միութեանը* մէջ: Ինչքան ալ տարբեր ըլլան անոնք նկարագրով, ինչքան ալ տարբեր ըլլան անոնց ապրելատեղն ու կենցաղը, անոնք կը զգան եկեղեցիով իրագործուած իրենց միութիւնը»--**Ս. Մաքսիմոս Խոստովանող** (580-662): Ինչպէս որ բազմաթիւ են արեւուն ճառագայթները բայց մէկ է անոր լոյսը, և ինչպէս որ բազմաթիւ են ծառի մը ճիւղերը բայց մէկ է հաստատուն արմատը ուրկէ կը բխի անոր գօրութիւնը. նոյնպէս, թէեւ բազում առուններ կը բխին մէկ աղբիւրէն՝ հակառակ որ անոր բազմութիւնը կը թուի տարածուած ըլլալ ամէն կողմ դէպի յորդառատ ջրհորներ, սակայն իրենց միութիւնը կը մնայ հաստատ, որովհետեւ բոլորն ալ մէկ Աղբիւրէն՝ Յիսուսէ՛ կը բխին:

Նախքան Բարաջէն եկեղեցիներու կառոյցին, ամէն մարդ ինքն իր մէջ եկեղեցի էր և նոյն ինքը՝ Բահանայ, իւրաքանչիւր մարմին սուրբ սեղան էր և անոնց հոգիները ընդունելի զոհաբերութիւն, անձնագոհ և իրենց կոչումին բարձրօրէն գիտակից: Սուրբ Աւետարանի սահմանումով չկայ և չի կրնար ըլլալ «մեր» կամ «ձեր» եկեղեցին: Ոչ ալ «ազգային եկեղեցի», որակումը կրնայ շիտակ ըլլալ: Եկեղեցին մէկ է և անոր Տէրը Քրիստոս է: Ամէն անգամ որ Յիսուս եկեղեցի անունը յիշած է, ըսած է. **«Ի՛մ Եկեղեցիս»:** Մեծ Եղեռնին երբ Հայեր ախորոհեցան անապատ, հոն եկեղեցական կառոյց չկար, սակայն իրենք դարձան կենդանի եկեղեցի, խորան և վկայութիւն: Քրիստոս՝ Իր համբառնալէն անմիջապէս առաջ ըսած էր. **«Ինձի համար վկաներ պիտի ըլլաք»:** Ի վերջոյ անոնք կնիքեցին իրենց վկայութիւնը արիւնով:

**«Արձագածն՞ց ըլլալ Աստուծոյ ձայնին, փողահարը՝
Իր կոչին, բարձրաբարբա՛ն կանչը՝ Իր խօսքին,
բայց Բաղքաբազոյ՛նն է դառնալ ճառագայթը
Իր Լոյսին և Սիրոյն»:**

Եկեղեցիին կազմաւորման համար վճռորոշ նշանակութիւն ունեցաւ **աղանատեսներու** վկայութիւնը: Եկեղեցին Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնն ու հաղորդակցութիւնն է: Երբորդ ու չորբորդ դարէն յետոյ, եկեղեցիին մէջ շարունակ ձգտում մը արկում մը սկսաւ, ըլլալու *հիմնարկութիւն* և մը փոխանակ *կենդանի՛ ջարձման*: Եկեղեցին շարունակելու էր մնալ մտքի և խօսքի խորհրդարան, ուր կ'արծարծուին հաւատքի, սիրոյ՛ և ապրումի արդի պայքարը: Եկեղեցին կանգնած է, որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժեքները, սէր, նուիրում և սրբութիւն: Պօղոս միշտ զօրավիգ կանգնեցաւ Պաղեստինի հրեայ եկեղեցիին և յարգեց այդ աթոռի նախագահութիւնը: Սակայն պատմականօրէն այդ շրջանին ու մինչեւ 70 թուականներուն երբ Երուսաղէմն ու տաճարը կործանեցան, Քրիստոնեայ հաւատացեալներ մեր Բարաջէն եկեղեցիներու նման որեւէ կառոյցներ չունեին: Առաքեալներու նպատակը կազմակերպել և միասնական սիրոյ մէ՛ջ համա-

խմբել էր հաւատացեալները:

Չորրորդ դարէն յետո՛յ է որ Բրիստոնէայ կարծուած եպիսկոպոսներ, Կոստանդին Թագաւորին դրամով կառուցին գեղեցկատեսիլ Բարաշէն ու մարմարաշէն կառոյցներ մրցակցելու համար հեթանոս մեհեաններու և անոնց անհոգի սակայն արտաֆնապէս գեղեցիկ տեսնուած ճարտարապետական կառոյցներուն, որոնք կը շարունակեն ցարդ: Դարեր՝ շրջած և անցած էին սուրբ և անձնագոհ առաքեալներու ներկայութենէն: Բազմաթիւ հեթանոս մտայնութիւններ և վարդապետութիւններ սպրդած էին Բրիստոնէական հաւատքէն ներս: Եպիսկոպոսներ ու Եկեղեցական բազմաթիւ հպարտ ու փառասէր առաջնորդներ կը ջանային իրենց փառքը աւելցնել ու դառնալ երեսելիներ և հոգեւորականներ: Որոնց զոհերէն գլխաւորը եղաւ Ս. Օհան Ոսկեբերան, Բիւզանդիոնի Պատրիարքը, որ հալածուեցաւ և աֆորուեցաւ Հայաստանի Կիլիսոն գաւառը ուր ան ֆալելով ձիւնապատ արահետներու մէջէն հիւանդացաւ մեռաւ:

Այսօր, "Եկեղեցի" բառը կը նշանակէ մի միայն Բարաշէն և մարմարաշէն Կառոյց մը, խորանով և մոմերու լոյսերով զարդարուած, որուն վրայ կը կանգնի Բրիստոս Յիսուսի ջալակած խաչի նշանը: Եկեղեցի երթալը որքան սովորոյթի ուժով պարտադրուած անհրաժեշտութիւն մը դարձած է: Ի՞նչ իմաստ ունի եկեղեցի երթալը և կամ աղօթելը առանց զգալու Աստուծոյ ներկայութիւնը: Այս կառոյցէն ներս, հաւատացեալներ կը բերեն իրենց զաւակները մկրտուելու, չափահասները ամուսնացնելու "հաւատացեալները" ճաշկերոյթի և պարի, ու մահացածները թաղելու:

"Եկեղեցի" բառը՝ Աւետարաններու մէջ յիշուած է միայն երկու անգամ--**Մատթ. ԺԶ.18 և ԺԸ.17**: Առաջինը աշակերտներուն համար, իսկ երկրորդը բոլոր հաւատացեալներու ժողովին: Պօղոս առաքեալ "եկեղեցի" ըսելով "սուրբերու" հաւաք ըսել կ'ուզէ նոր հաւատացեալներու միաբանութեան: Պօղոս, 25 անգամ "սուրբեր" կը կոչէ եկեղեցւոյ հաւատացեալները: «Զարաշէն Եկեղեցի» չունինք, սակայն մե՛նք ենք եկեղեցին: Եկեղեցի չունինք, բայց եկեղեցի ըլլալու առանձնաջնորդումը ունինք: *«Իսկ Իր տունը (Եկեղեցի) մե՛նք ենք, եթէ միևեւ վերջ անկախտ պահենք մեր վստահութիւնը և մեր յոյսը, որով կը պարծենանք»--***Եբր. 9:7**: *«Տիրովհետեւ Զրիստոսի մաս կը կազմենք»--***9:14**: Առանձինս կարելի չէ եկեղեցի ըլլալ, ինչպէս կարելի չէ ընտանիք ըլլալ: Եկեղեցին ունի Թէ՛ իր Բառնաբասները և թէ Անանիա-Սաբիրաները:

Յիսուս Զրիստոսի հաւատացողներու հաւաքէն, կազմակերպութենէն ու հաւաքավայրէն զատ որեւէ (կրօնական) հաւաքատեղի չի կրնար "եկեղեցի" անունը գործածել, որովհետեւ "եկեղեցի" բառը՝ *«Զրիստոսի կը պատկանի»* (Անոր պատկանելիութիւնը) կը նշանակէ ու ո՛չ երբեք կրօնական հաւաքատեղի մը: Զրիստոս ըսաւ. "Իմ Եկեղեցիս" ո՛չ թէ *ջէնթի* մը համար, այլ Իր *հետեւ որդիներու ն*: Երբ Եկեղեցի մը մոռնայ կամ անտեսէ Աւետարանը, ան

կը դադրի Աստուծոյ եկեղեցին ըլլալէ: Երբ քրիստոնեայ մը Աետարանը իր ետեւը կը թողու ան կը դադրի մեր Տիրոջը և Փրկչին ճշմարիտ աջակերտը ըլլալէ:

«Քանզի եկեղեցի մեզ ոչ ցուցանէ պատուիրանն Աստուծոյ որ ի քարանց է ջինեալ, այլ **զհաւատով** ջինեալ զազգս մարդկան ի վերայ վիմին հաստատութեան. ապա ուրեմն ճշմարիտ հաւատն է եկեղեցի, որ գումարէ և ջինէ զմեզ ի մի միաբանութիւն գիտութեան Որդւոյն Աստուծոյ»--**Ս. Սահակ հայրապետի կանոններուն մէջ** (Սոփերք Հայկականք, էջ 100-101):

«Անհրաժեշտ է գիտնալ թէ ի՛նչպէս անշունչ քարէ և փայտէ ջինուածն ու հաւատացեալներու ժողովը հաւասարապէս եկեղեցի կը կոչենք: Եկեղեցին երրայերէնէ մեր մօտ ժողով կը թարգմանուի, ըստ նոյն անունին կը կոչուի ժողովարան, որովհետեւ ստուգապէս Աստուծոյ տուն ջինուած է անիկա, անոր մէջ Աստուծոյ Որդիին պատարագուելուն համար»-- **Յովհան Օձնեցի** կաթողիկոս (Օտղկափաղ էջ 95 թարգմանաբար): *«Իսկ իր տու նը* (Եկեղեցին) *մե՛նք ենեմք»*--**Եբր. 9.6:**

Արեւելեան Եկեղեցին փոխանակ իր ոյժերը գործածելու Աետարանի տարածման՝ իր առաջնահերթ պարտականութեան, ինչպէս կ'ընէին Առաքեալները, ընդհակառակը կը վատնէր զանոնք յաճախ ամուլ և անիմաստ վէճերու և վարդապետութիւններու: Իսկ Արեւմտեան Եկեղեցին, ուշ միջնադարերուն, դարձած էր շատ նիւթապաշտ և իշխանապաշտ: Ռուսիոյ երբեմնի փառաւոր ու ճգնազգեաց Եկեղեցիին նուիրապետութիւնը, 19-րդ դարէն մինչեւ Բասնէրորդի սկիզբները իշխանավայել կեանք ապրելու միայն տուած էր ինքզինքը և շատ քիչ կը մտածէր ուրիշ կենսական ու կրօնական հարցերու մասին: «Ես եմ ճշմարիտ որթատունկը», ըսաւ Քրիստոս, «և Հայրս մշակն է. իմ վրաս հաստատուած ամէն ճիւղ, որ պտուղ չի տար, կը կտրէ զայն Հայրս իսկ այն ճիւղը, որ պտուղ կու տայ, կը սրբէ զայն, որպէսզի աւելի պտղաբեր դառնայ»--**Յով. ԺԵ.1-3:**

Հալածանքները երբեմն կտրատումի և երբեմն ալ սրբացումի դերը կատարած են:

Յուլիս 17, 2003
Թորոնթօ

ՎՍԵՄ ԱՆՁՆԱԳՈՅՈՐԹԻՒՆ

Անձնագրահույժիւնը կը *չօտի* ապրողի մը կենդանի շունչէն, սիրալիր սրտէն ու բարի խոկումներէն: Ճշմարտութեան և կեանքի *հոտն* մըն է անձնագրահույժիւնը, որ կը ծագի մարդու սրտէն և հոգիէն ու կը մղէ սրտով մաքուրները աստուածային նմանութեան, որ համակ, անհատնում և ամբողջանուէր անձնագրահույժիւն է, մանաւանդ մարդ արարածին հանդէպ:

Հին աստուածները անձնաւորած էին բնութեան բոլոր *հակադրակաւ* երեւոյթները: Օրինակ, սէրն ու ատելոյժիւնը, վրէժխնդրութիւնը և բոսութիւնը, լոյսն ու խաւարը, բարին ու չարը, հեշտութիւնն ու գազանութիւնը կը վերագրուէին աստուածներուն: Դիցուհին, կապուած աչքերով, ոտքի կանգնած գունտի մը վրայ կ'անձնաւորէր բախտը՝ ճակատագիրը:

Աստուածասիրութիւնը միայն պաշտամունքային ձեւականութեան մէջ սահմանափակելու չենք, այլ ճշմարիտ աստուածասիրութիւնը կ'արտայայտուի մարդասիրութեան և անձնագրահույժեան արարով: Տիեզերքի յայտնաբանութեան մէջ, աստուածային տեսիլքը անվերջանալի անձնագրահույժեան կը նմանի, որ կը ներհոսի դէպի աստուածային էութիւն ու կ'արտահոսի դէպի ստեղծուած աշխարհ անսպառ հեղումով, որուն խորհրդանիշը՝ Լոյսն է ու Աւերը:

«Թո՛ւք է՛ք աշխարհի լոյսը» ակնարկութիւնը Յիսուս Զրիստոսի՝ անուրանալի մատնանշումն է Աստուծոյ շնորհած պարգեւին, որ մարդ դառնայ անձնագրահ: Մարդու գոյութիւնը կ'իմաստաւորուի միայն անձնագրահ Աստուծոյ գոյութեամբ, առանց Որուն, մեր գոյութիւնը կը դառնայ իմաստագուրկ՝ անասնական: Աստուծոյ Թագաւորութեան մէջ պիտի տիրապետէ Աստուծոյ *ամբողջակաւ* սէրը, ընկերասիրութիւնը և անձնագրահութիւնը:

Աստուածային իտէալը՝ մտատիպարը դիւրահասկնալի և ըմբռնելի դարձաւ մի միայն մեր Տիրոջ Յիսուսի անձնագրահ ապրումով, խոնարհութեամբ և մարդասիրութեամբ: Զրիստոնէութեան առաւելութիւնը ա՛յն է, որ ան տեսութիւն՝ դաւանանք մը չէ միայն և ո՛չ ալ *վարդապետութիւն* մը, այլ մարմնաւորումը Յիսուս Զրիստոսի Անձնաւորութեան և ապրումին: Բացարձակ անձնուրացութեան, զոհողութեան և նուիրումի ճանապարհը Յիսուս Զրիստոս է՝ Լուսահանդերձ նագովրեցին մարդեղացեալ Կեանքը:

Անձնագրահութեան վսեմութիւնն ու վեհութիւնը, ոչ թէ անձին զոհողութիւնն է միայն, այլ՝ գոյութեան արժեքաւորումը, կեանքին քաղցրութիւնը և ստեղծագործ ապրումը ճանչնալէ ու ճաշակելէ *յեսո՛ւ* գայն անձնուրացօրէն զոհե՛լն է, որ *հեքոտաթի՛ն* կը նշանակէ:

Եկեղեցին ծաւալեցաւ ու բազմացաւ առաւելաբար կամաւո՛ր աշխատանքի, զոհաբերութեան և ինքնանուիրումի շնորհիւ: Հայ թարգմանիչները՝

աշակերտները Ա. Մեսրոպ Մաշտոցի գոհաբերութեամբ ու գրկանհր՛վ, էջ առ էջ դրոշմեցին մեսրոպատառ լեզուն: Հայ նահատակները իրենց անձին գոհաբերութեամբ ապահովեցին Եկեղեցւոյ հօտին կեանքը ու աւանդեցին Բրիստոսի Լոյս Հաւատքը Բեզի և ինծի: Հայ Եկեղեցիները, վանքերը և խաչքարերը, թէև փլատակուած ու աւերակի վերածուած են, սակայն անոնց խօսքը, երգը և աղօթքը խօսուն վկաներն են գոհաբերութեան:

«Մողոք» Ամմոնացւոց չաստուածը փոխաբերական առումով կը նշանակէ թագաւոր, սարսափելի և անյագուրդ ուժ, որ անընդհատ կը պահանջէր մարդկային անմեղ գոհեր: Իսկ Բրիստոսի յայտնաբանած Աստուածը, ցասկոտ ու դաժան բունակալ մը չէ՛, անողոք ու անգուլթ դատաւոր մը չէ՛, այլ սիրո՛ղ և ողորմո՛ղ բարեգուլթ Հայր մը: «Հաւատամք ի մի Աստուած» կը նշանակէ Գողգոթայ, ուր կը *տառապի* Աստուած, յայտնելու համար Իր սերն ու ողորմութիւնը համայն մարդաշխարհի: Բրիստոնէական հասկացողութեամբ, Աստուած վեհափառօրէն Հայրութիւն է, որ կը հոգա՛յ Իր համայն արարչագործութիւնը:

Բրիստոնէութեան կեդրոնը, առանցքը Յիսուս Բրիստոսի Ա՛նձն է: Բրիստոնէական հաւատքը Նոր Կտակարան գիրքէ մը չծլաւ, այլ Բրիստոսի ներագդեցիկ ճոգւոյն զօրութեամբ իրագործուեցաւ: Առաքեալներն ու սկզբնական Եկեղեցիները ապրեցան ու Զարոգեցին Յիսուսի անձնագոհ Անձնաւորութիւնը, սէ՛րն ու ողորմութիւնը: Խաչքարե՛ր, մին Նորմանտիայի ծովափին, (Բ. Համաշխարհի Պատերազմի Մեռնողներուն) որ կը խորհրդանշէ կատաղութիւն և վրէժ, իսկ միւսը փլատակուած Հայ վանքի մը առջեւ, որ կը խորհրդանշէ անձնագոհութիւն, թողութիւն ու սէր:

«Խորագոյն վիշտի և յուսախարութեան մէջ, կա՛յ յոյս և ահագնազօր ցառի ու տառապանքի մէջ, երբ տիեզերք յանկարծ կործանի, և ամայանայ, կա՛յ Աստուած»:

Հին Կտակարանի մէջ աստուածալայտնութիւնը կը սկսի Մովսէսի օրէնքներով կը զարգանայ Մաղմոսներու մէջ, կը բարձրանայ և կը յառաջ-դիմէ երկնաբարձ գազաթներ մարգարէութեան մէջ ու գերագոյն կատարին կը հասնի Յիսուսի Մարդեղութեամբ, Անոր ապրումով և գոհողութեամբ: Ծնորհիւ Յիսուս Բրիստոսի Խաչելութեան, Ան Ի՛ր անձնագոհութեամբ, մեր հողային բնութիւնը շարունեց աստուածայինին հետ:

«Եւ Բանը մտքմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ. և մենք տեսանք անոր փառքը, որպէս շնորհով և ճշմարտութեամբ լի Արածնի փառք՝ ստացուած Հօրմէն»: (Պայծառակերպութեան պահուն):

Ինչո՞ւ անձնագոհութիւնը յաղթահարեց նիզակայի՛ն հերոսութիւնը: Մինչեւ յայտնութիւնը նազովրեցի Յիսուսի, վսեմութիւնը, վեհութիւնը, հերոսութիւնն ու քաջութիւնը կը նկատուէին *զինեա՛լ* զօրութիւն: Ասպատակութիւն, վրէժխնդրութիւն, սպաննութիւն, գերեվարութիւն և ուրիշը նուաճել, դիւցազնութիւն կը նշանակէր: Եթէ կը սխալիմ, կարդացե՛ք Տրովաթայի պատերազմը ուր ճոմերոս կ'ըսէ.

«Վրէժը անլի քաղցր է քան մեղքը»:

Անդին, Աւետարանի դիւցազնաշունչ առաքեալը, յայտնաբանելով. Յիսուս Զրիստոսի սերն ու անձնագոհութիւնը, կ'ըսէ.

***«Ան մեր հիւանդութիւնները իր վրայ առաւ
և մեր ցաւերը կրեց»--Մատթ. Ը.17***

Վիկտոր Հիկոյ, խորապէս յուզուած Յիսուս Զրիստոսի վսեմ գոհողութենէն, հեգնական ծաղրանով կը գոչէ.

«Թողանա՞ծք թո՛ղ լուծէ վրէժը մայրերու, որբերու, այրիներու. թո՛ղ լուծէ վրէժը որդիներու, որոնք այլեւս հայր չունին, և հայրերու, որոնք այլեւս որդի չունին. Թո՛ղ լուծէ վրէժը քաղաքակրթութեան. թո՛ղ լուծէ վրէժը տիեզերական պատուին. թո՛ղ լուծէ վրէժը մարդկային խղճին, որ կ'արհամարհուի այս ամենաչար պատերազմով».

Իսկ սուրբ Աւետարանները, որպէս "Անլուելի Չանգակատուն" կը սրինգահարեն ըսելով.

***«Սէրը կը հերոսանայ, հաւատքը կը սրբանայ ու
գոհողութիւնը կը դիւցազնանայ»:***

**Օգոստոս 25, 1994
Թորոնթօ**

ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԱՐԱԳԵԱՂ ՉԱԽԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ

--Յոզ. ԺԲ.24-26:Ի՞նչ

կը նշանակէ "պատարագեալ հաւաքականութիւն": Նախ թափան- ցենք "պատարագեալ" բառին իմաստին: Պատարագ կը նշանակէ ընծայում, նուիրում և զոհողութիւն: Նուիրել կը նշանակէ ունեցածդ (ոչ աւելցուցելդ) բան մը տալ: Անձի մը ամենարժեքաւոր աւանդը, իր *անձնաւորութիւնն* է: Աղփատ այրի կնոջ բոլոր ունեցածը երկու լումայ էր, որ ձգեց գանձանակին մէջ:

Մեր Տէրը, Յիսուս ի՞նչ պահանջեց Իրեն հետեւիլ ուզողներէն: Ան ըսաւ *«Աւրացիր անձդ, խաչդ ջալակէ և հետեւէ Ինձի»*: Յիսուս Ի՞նչ տուաւ առաջին ու գերազանց օրինակը անձնուրացութեան և դիւցազնական զոհողութեան: Ան խրատեց Իր աշակերտները և ըսաւ.

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ միայն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ ջատ արդիւնք կու տայ: Ով որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ով որ այս աշխարհի մէջ կ'ատէ իր անձը՝ պիտի պահէ զայն յաւիտենական կեանքի համար: Եթէ մէկը ինձի ծառայէ՝ իմ ետեւէս պէտք է գայ և ուր որ ես եմ, այնտեղ պէտք է ըլլայ նաև իմ ծառայ. եթէ մէկը ինձի ծառայէ՝ Հայրս ալ պիտի պատուէ զայն»--Յոզ. ԺԲ.24-26:

Ի՞նչ կը նշանակէ "անձը ատել": Մարդ արարած, սկսեալ իր ծնած օրէն, կը ծառայէ իր անձին: Ան կ'ուզէ կենդանի պահել իր անձը, հետեւաբար շարունակ կ'ուզէ որ մայրը իր մօտը ըլլայ: Որովհետեւ իր կեանքին աղբիւրը մօրը կաթն է: Երբ քիչ մը մեծնայ, չ'ուզեր բաժնուիլ իր խաղաղիկներէն, որովհետեւ անոնք են իր ընկերները: Երբ չափահասութեան հասնի կը գտնէ շատ աւելի հզօր ընկեր մը, որ իր անձնաւորութեան կ'ընծայէ փառք, պատիւ և զօրութիւն: Այդ ընկեր կարծուածը աշխարհի հարստութիւնն է, որ ի վերջոյ կը դառնայ մարդ արարածին տէրը:

Մարդկութիւնը, ընդհանրապէս, չանդրադարձաբար թէ ինչպէ՞ս տարիներու ընթացքին, փոխանակ բարձրանալու դէպի վերելք, սահած և ինկած է անձնասիրութեան յորձանքը: Անձնասէրը՝ ընկերասէր չի կրնար ըլլալ: Անձնասէր մարդը միայն իր անձին շահովը և իր անձին փառքովը կը հետաքրքրուի: Ան իր «Ես»ի՝ անձնասէր խորանին պաշտամունք կը կատարէ: Այժմ աշխարհի հոգեբանութեան մէջ տիրակալողը անձնասիրութիւնն է, որ կուրցուցած է

մարդ արարածին տեսողութիւնը:

Պօղոս առաքեալ, որ ժամանակին, ի՛նքն ալ պաշտամունք կատարած էր անձնասիրութեան խորանին, տարբեր կերպով կ'արտայայտուի ճանչնալէ յետոյ Յիսուս Փրկիչը, ան կ'ըսէ.

«Ո՛վ պիտի փրկէ զիս այս մարմինէն (անձնասիրութենէ), որ մահինն է, (այսինքն դէպի մահ կ'առաջնորդէ): Որովհետեւ ոչ թէ կ'ընեմ բարին զոր կ'ուզեմ, այլ կ'ընեմ չարը զոր չեմ ուզեր: Բայց գոհութիւն Աստուծոյ մեր Տէր Յիսուս Բրիստոսի միջոցով: Ապա ուրեմն ես ինքն իմ մտովս կը ծառայեմ Աստուծոյ օրէնքին, իսկ մարմնովս՝ մեղքի օրէնքին:» -- Հռոմ. Է. 25:

Մարմինը կը կատարէ ա՛յն, ինչ որ հոգին կը պատուիրէ: Երբ մարմինը տիրապետէ հոգիին, այդ մեղանչում է: Մարմին բառը աւելի հողայի՛ն սահմանում կը նշանակէ, իսկ հոգեկանը գերիվեր և խորհրդագգած վիճակ: Գեղեցիկ մարմին մը առանց գեղեցիկ հոգիի՝ աւելի կու՛ովի կը նմանի Բան թէ մարդու: Ծանկալը մարմնական, տարածուն ախտ մըն է: Ծանկալը՝ տարիքի, զբաղումի, և ընկերային վիճակի հետ աղերս չունի: Պատանին նախանձի աչքով կը դիտէ իր ընկերը և առեւտրականը կամ արուեստագէտը նախանձոտ զգացումներով կը դիտէ իր մրցակիցները:

Յիսուս ինչո՞ւ կ'ուզէ որ Իր աշակերտները ուրանան իրենց անձը: Որովհետեւ մարդ ի բնէ կ'ուզէ գերիշխան ըլլալ: Մարդ բնագործն կը փափաքի որ ուրիշներ իրե՛ն ծառայեն: Զօրաւոր ազգեր միշտ ուզած են ուրիշ ազգերը ենթարկել ու հպատակեցնել իրենց իշխանութեան: Մինչդեռ Աստուած ստեղծեց մարդը իշխելու ո՛չ թէ իր մարդ ընկերոջը վրայ, այլ **երկրի՝** վրայ: Աստուած ստեղծեց մարդը, որ ան դարնայ մշակ: Մարդ արարած մի միայն կրնայ իշխել երկրի հողի՛ն վրայ, և պարտ է սիրել և ծառայել իր մարդ ընկերոջ: Մակայն մարդ արարած իշխած է և ստրկացուցած իր ընկեր մարդը, զա՛յն ծառայեցնելով իր փառքին ու հաճոյքին համար:

Եկեղեցին, Յարուցեալ Յիսուս Բրիստոսի տեսանելի և ըմբռնելի Մարմինն է: Ինչպէս որ բանաւոր էակը իր մարմինով կը գործէ, այնպէս ալ Բրիստոս Իր Մարմինով՝ Եկեղեցիով կը գործէ ներկայիս: Ո՛վ է եկեղեցին, եթէ ոչ Յիսուսի աշակերտիլ փափաքող մարդ արարածները: Հետեւաբար, Յիսուսի հետեւողներ, որպէսզի իրենց փառքին ու հաճոյքին չենթարկուին, Յիսուս, իրենց Տէրը կը պահանջէ որ անոնք ուրանան իրենց անձը և ջալակեն իրենց խաչը՝ պարտականութիւնը, և հետեւին Իրեն: Միայն այսպէսով է, որ սուրբ Եկեղեցին պիտի կրնայ ներկայացնել Իր Տէրը Յիսուս Բրիստոսը:

Ուստի եթէ եկեղեցի մը կ'ուզէ Յիսուս Բրիստոսի պատկանիլ, ան պարտի

դառնալ *պատարագեա՛լ եկեղեցի* մը, այսինքն, ծառայո՛ղ, սիրո՛ղ իր մարդ ընկերը և մարմնապէս ու նիւթապէս զոհագործուող: Ներկայ դարու եկեղեցիները դարձած են նզովողներ, կախակայողներ և իրենց նման չխորհողները լռեցնողներ: Մինչդեռ, Յիսուսի պատկանող եկեղեցիները, իրե՛նք պարտին ըլլալ պատարագեալը՝ կոտորուողը, փջրուողը և անարգուողը: Յիսուս Ինք ըսաւ.

***«Այս ոչխարհի մէջ նեղութիւն պիտի ունենամ, սակայն
Քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի ոչխարհին»:***
--Յով. ԺԶ. 33:

Առաքեալներէն սկսեալ մինչեւ չորրորդ դար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ գահի վրայ բազմած և ուրիշները նզովելով կաթողիկոսութիւն չըրաւ, այլ՝ ի՛նք հալածուեցաւ, չարչարուեցաւ և 13 տարի Խոր Վիրապի մէջ բանտարկուած ապրեցաւ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ իսկապէս հոգւով ու մարմնով պատարագեա՛լ եպիսկոպոս մը եղաւ: Ան իսկապէս կրցաւ ուրանալ իր անձը և իր արժանապատութիւնը Յիսուս Զրիստոսի համար: Ան շալակեց իր խաչը և հետեւեցաւ իր Փրկչին: Եկեղեցւոյ խորանէն, միայն Պատարագել ու Բարոզել պատարագեա՛լ Զրիստոնեայ մը ըլլալ չի նշանակեր երբեք: Պատարագել ու Բարոզել, կրնայ նաեւ դերակատարութիւն մը ըլլալ իսկ *պատարագեա՛լ Զրիստոնեայ ըլլալ* կը նշանակէ կոտորուիլ, հալածուիլ անարգուիլ և ծառայել առանց ակնկալութիւն մը ունենալու մարդոցմէն:

Պօղոս առաքեալ, իր երկարամեայ աւետարանչական փորձառութենէն յետոյ, կը խրատէ իր երիտասարդ Տիմոթէոս աշակերտը ըսելով.

*«Բոլոր անոնք՝ որ կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրիլ
ի Յիսուս Զրիստոս, հալածանքներու մէջ պիտի ըլլան...:
Բայց դու ն հատա՛տ կանգնէ՛ այն բաներու ն մէջ՝ զոր
սորվեցար և որոնց հաւատարիմ եղար»* --Բ. Տիմ. Գ.12-14:

**Յիսուս ըսաւ. «Ես եմ բարի հովիւր. բարի հովիւր
իդ կեանքը կու տայ ոչխարներու ն համար:**

Իսկ վարձկանը, որ հովիւ չէ, և ոչխարներն ալ իրենը չեն, երբ կը տեսնէ որ գայլը կու գայ՝ կը թողու ոչխարները և կը փախչի: Եւ գայլը կը յափշտակէ զանոնք ու կը ցրուէ»: Մի միայն իր կեանքը տուո՛ղ հովիւ մը կրնայ պատարագեալ հաւատացեալ մը ճանչցուիլ: Յիսուս Զրիստոս այսպիսի վեհանձն ու պատարագեա՛լ ֆահանսներու և Բարոզիչներու համար կ'աղօթէ ա՛յն աղօթքը, որ արձանագրուած է Յովհաննու ԺԷ գլխուն մէջ: Կարծէ կարդալ մեր Տիրոջ այդ աղօթքը առ Հա՛յր Աստուած, որ համակ նուիրում ու սէր է հանդէպ Իր աշակերտներուն:

Սեպտեմբեր 13, 2000, Թորոնթօ

ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ ԹԷ ՆՈՒԻՐՈՒՄ

Աշխարհ, այսօր կ'ապրի մոլեռանդութեան տիրակալութեան ներքեւ: Տեղապաշտական մոլեռանդութիւն, կուսակցական մոլեռանդութիւն, եսապաշտական մոլեռանդութիւն, հարստութեան մոլեռանդութիւն և կրօնական մոլեռանդութիւն:

Մարդկութիւնը կ'ընթանայ սխալ հոգեբանութեամբ, կատաղած կիրճով և հաճոյք կ'առնէ միսրճուելով իր սխալանքներուն մէջ: Ինչո՞ւ, որովհետեւ իր չափազանցուած սանձարձակ անձնասիրութիւնը աղօտած է իր տեսանկիւնութիւնը: Տրամաբանական արարածէ, ան իջած է անբան անասունի, որ կ'ուզէ գործածել իր արիւնարբու ժանիքները, փոխանակ իր իմացական մտածողութեան: Ամբոխը յաճախ սխալ մտայնութեամբ կը գործէ և կը ջփոթէ մոլեռանդութիւնը **նուիրումի** հետ, որ բացարձակ անձնուրացութեան և զոհողութեան ճանապարհն է:

Հակադրողները կրնան վկայել թէ մոլեռանդութիւնն ալ ուրացութիւն և զոհողութիւն կը փողահարէ: Այո, մոլեռանդութիւնը կ'ուրանայ, սակայն ո՛չ թէ **ի՛ր** անձը, այլ դիմացինը, և կը զոհէ, ո՛չ թէ **ի՛ր** անձը՝ այլ իր հակառակորդը: Մոլեռանդութեան անդիմադրելի մղումները կու գան վրէժխնդրութեան բուռն զգացումներէ: Բնական (մարմնական) բանականութիւնը՝ վրէժխնդրութիւն և **"ես"**-ին ջահախնդրութիւնն է, որ պատիժ և վրէժխնդրութիւն կ'աղաղակէ: Մարմնական հակադարձութիւնը **բնագոյային** անդրադարձ (reflex) մըն է, որ կոյր մոլեռանդութեան գահավէժը կ'առաջնորդէ իր հպատակները:

Նուիրումի մարմնացումը, մեր Տէրը Յիսուս Քրիստոսն է: Ան ձեւ ու մարմին, իմաստ և հաւատքի պայծար ցոյց տուաւ նուիրումի սրբարար արարչագործութեան: Հողը ժողովուրդի մը արիւնը կը պահանջէ, իսկ հոգի՞ն...ամբողջական նուիրում և անձանձիթ ծառայութիւն: Մի միայն Սուրբ Խաչեցեալին **խորհուրդի՛ն** մէջ կարելի է ճշդել հոգիի և մտքի նուիրումին տարողութիւնը:

Բոլոր առաքեալները հետեւեցան իրենց Փրկչին՝ Յիսուսի ու նուիրաբերեցին իրենց կեանքը Աւետարանի փարոզութեան և ուսուցման, ու կնիքեցին իրենց նուիրումը նահատակութեամբ: Հայոց լուսաւորիչը Ս. Գրիգոր Պահլաւունի 13 տարիներու տանջալիր բանտարկութենէ յետոյ և բազմաթիւ հաւատացեալներու տանջաբար սպանութիւններու ականջալուր ըլլալէ վերջ, փոխանակ դիմելու վրէժխնդրական ու զինեալ յեղափոխական պայքարի, դիմեց անձնուրաց նուիրումի, անյիջաչար մոռացումի և յաւերժական յաղթանակի: «Ս. Գրիգոր Լուսաւորիչով նոր խորք ստացաւ Հայ կեանքը, նոր դիմագիծ՝ Հայ ժողովուրդը ու նոր արիացում հայոց պատմութիւնը»:

Իսլամութիւնը կրնայ դիմել զինեալ հաւատափոխութեան և գազանային միջոցառումներու, որովհետեւ իր հիմնադիր մարգարէն քաջալերեց սուրն ու զէնքը: Յիսուս Քրիստոս՝ Հիմնադիրն ու Տէրը Ա. Եկեղեցիին, առանց զէնքի և ինքնապաշտպանութեան յալթանակեց քիրտ գօրութեան, մահուան և գերեզմանին՝ սիրոյ, նուիրումի և զոհողութեան ներգործութեամբ:

Բիւզանդիոնի Կայսրութիւնը՝ իր ամբարտաւան կեցուածքով, գաղթատիրական և ծաւալապաշտ ազահութեամբ ջանաց փոխարինել իր Տէրը, հաւատքը և Աստուածը:

Տիեզերական Եկեղեցւոյ կարծեցեալ թագաւորը Բիւզանդիոն, գերեվարեց իր գաղթատիրութեան բնակիչները, և անոնք Եգիպտացիք, սգիսօրէն և անփորձօրէն բացին Ափրիկէի դուռ՝ Եգիպտոսը Իսլամ յորձանուտին, որոնք Բջեցին իրենց բանակները մինչեւ Ապանական Անտալուզ:

Ինչպէ՞ս գատորոշել մուեռանդութիւնը՝ անձ նուիրումէ:

Մուեռանդ բառը ինքնին բաղադրեալ բառ մըն է, որ կազմուած է երկու բառերէ. 1.- *մու* և 2.- *եռանդ*: Ըստ Հր. Աճառեանի, "մու" կը նշանակէ "մի բանի սաստիկ կապուելով *խենթենայ, ցնորիչ, կատրիչ*": Որպէս արմատ, առանձին անգործածելի է սակայն բաղադրեալ կերպով գործածելի, ինչպէս. *մուխիւնդ, դիւամու, իզամու, որկրամու, մուեգին, մուորիչ* եւլն:

Մուեռանդութիւնը եւս, նման դիւային ներշնչումի, իրեն կ'ենթարկէ զինք հրաւիրողները և զինք հիւրնկալողները: Կանջատէ անոնց տրամաբանական թելը, կը դադրեցնէ զանոնք մտածելէ, կը կուրացնէ անոնց տեսանելիութիւնը և կը շղթայէ զիրենք **եսասիրութեամբ**:

Հայերէն "նուիրում" բառը մուտք գործած է մեր լեզուին մէջ՝ պահլաւերէնէ, որուն նշանակութիւնը թարգմանաբար կ'արտայայտէ *"սրբագործել, ձօնել և նուիրագործել*: ինքզինքը: Նուիրում բառին ծագումն է "նի" մասնիկը, որ կը նշանակէ *ցիտնայ, ճանչնայ*: Հայ հեթանոս աւանդութեան շրջանին գինիի առաջին բաժակը կը ձօնուէր հեթանոս աստուածներու: Վերոյիշեալ անձնանուիրումն է որ սրբագործուելով, իւրաքանչիւր հաւատացեալ, նուիրած կ'ըլլայ իր անձը Աստուծոյ և անոր ջատագովութեան և ծառայութեան: Անսիրտ, անսէր և աննպատակ նուիրաբերումները արժանիք մը չեն, այլ մուեռանդութիւններ ինչպէս կ'երեւին բազմաթիւ պետական, քաղաքական և ազգային ներկայ զինեալ ընդհարումներու ընթացքին:

Մուեռանդութեան ծլարձակումը կեանքի երկու եզերներն են՝ առաջինը՝ մարդկային, *մարմնի տենչանք*: իսկ երկրորդը աստուածային՝ *հոգեկան խոյանք*: Քրիստոնէութեան մէջ, աղօթքի նշանակութիւնը հոգիի ամենէն նուիրական և սրբազան գործունէութիւնն է: Հաւատացեալի մը նուիրական և հոգեթափանց խորհրդանիշը ծառայութիւն և հանրօգուտ սպասարկութիւնն է: Լուսեղէն Յիսուս ըսաւ.

*«Ձեզմէ ով որ կ'ուզէ մեծ ըլլալ՝ ձեր սպասաւորը
պէտք է ըլլայ. և ձեզմէ ով որ կ'ուզէ օռօջին ըլլալ՝
ձեր սպասաւորը պէտք է ըլլայ. ինչպէս որ մարդու
Որդին ալ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծա-
ռայելու և իր անձը որպէս փրկանք տալու ջատարու
փոխարէն»--*Մատթ. Ի.26-28:

Կը նշմարե՞նք արդեօք, մեր ինքնութեան կերպարը արդի մարդկային ընկերութեան տագնապին մէջ: Մեր ինքնատիպ և ուրոյն դիմագիծը ո՞ր եզրի դասած է մեր մտայնութիւնը՝ *մղեռանդութեա՞ն թէ նուիրումի*: Եզրին: Հայակերտումի մեր դարբնոցները ինչպէ՞ս կը դաստիարակեն նոր սերունդը: Մոլեռանդութեա՞ն ոգիով, թէ նուիրումի ճառագայթարձակ լոյսով:

Ձի բաւեր միայն հիանալ նուիրումի վեհ և սրբազան գաղափարականին: Փարիսեցիք թէև հիացան Տիտուս Մարգարէին, սակայն իրենց սրտին մէջ նախանձեցան ու յետոյ խաչեցին Ձինք: Անհատէն ու ընտանիքէն, կուսակ-ցութենէն ու դասակարգէն բարձր ու վսեմ կայ ու պիտի մնայ անձանձիր նուիրում և անոր կանչը: Մոլեռանդութեան հողի վրայ առաքինութեան շուշաններ չեն ծաղկիր, այլ արցունք և մահուան ստուերներ կը սողանցեն: Ինչպէս հայ բեկորները դուրս եկան Տէր Չօրի մահաբունէն, այնպէս ալ մեր պատանդ անձնականութիւնը դուրս ելլելու է մոլեռանդութեան ճիրաններէն՝ անհեթեթ տրամաբանութենէն և անխորհուրդ ու անհեռատես իրագործութիւն-ներէն:

Անհունին հետ կանգնած, հաւատնով դիտենք ու ձգտինք դէպի այգալոյսող յաղթութեան, այն երանութեան ուր կայ ճշմարտութիւն, խաղաղութիւն և կեանք: Աստուծոյ վրայ խարսխուած հաւատքը ցնորք մը չէ՛, երեւակայութիւն մը չէ՛, այլ ջօջափելի իրականութիւններէ դէպի հոգեկան բարձր ապրումի միջնուրտ, տեսանելի կեանքէն դէպի անոր ներքին ելութիւնը: Ճանչցուած գիտութիւնը կամ հմտութիւնը միայն երեւցած իրականութիւնն է: Ինչո՞ւ չհաւատալ նաեւ իրականութիւններու, որոնք մեր հասողութենէն դուրս, և ըմբռնելու կարողութենէն անդին են:

Քիրահաարտ իմաստասերի կրօնական զարթօնքը եղաւ անվերապահ միքճում մը հոգեկան իրականութիւններուն:

Ներկայ դարու ողբերգութեան իսկական պատճառը ա՛յն է, որ արուեստը իր բոլոր ճիւղաւորումներով, իրականութիւնը և ճշմարտութիւնը իրենց ջատագովներով վստահուած են գաճաճ հոգիով մարդոց ձեռքը, որոնք *կեանքը* կը ջփթեն *երազին* հետ և կ'ուզեն վէպի վերածել իրականութիւնը: Տիտուս Զրիստո՛ս է գերագոյն իրականութիւնը բոլոր ժամանակներուն:

Տիտուս Զրիստոսի Մարդեղութիւնը *մարդակերտումի*՝ առաքելութիւն մըն է: Անվեհեր նահատակ վկայ Պօղոս առաքեալ կ'ըսէ.

**«Բանաստեղծները, խառնարկն լռյսին, դարձնեն զանոնք
և Մատանայի իշխանութենէն՝ Աստուծոյ»--Գործք. ԻԶ.18:**

Յաւերժութեան լուսաբացը ծնունդ առաւ Գողգոթայի վսեմ նուիրագործումէն: Յիսուս Մարգարէն դաստիարակեց ու փոխակերպեց պարզ ձկնորսները առաքելներու և աստուածաբարբառ հերոսներու: Աննուաճ պահել ֆրիստոսաւանդ, առաքելաժառանգ և լուսաւորչահիմն հայուն հաւատքը, կը նշանակէ անձին էութենէն ճառագայթող առաքելութիւն՝ նուիրում, ծառայասիրութիւն և անսպառ սէր բոլորին առանց վրէժխնդրութեան: Պօղոս և Պետրոս առաքելներ՝ իրենց արեան նահատակութեամբ վկայակոչեցին Զրիստոսի առաքելութեան **տիեզերական** ոգին:

Հաւատացեալ մը Զրիստոսի հետ կը կանգնի իր գօրեղ կամֆով, հզօր մտֆով, անսպառ եռանդով և խոր սիրով դէպի իր գործը, առաքելութիւնը և անդարձ կոչումը:

Հոկտ. 31, 1993

Թորոնթօ